ԼՐԱՏՈՒ ХРОНИКА

ՀԱՅԿԱԿԱՆ ՍՍՀ ԳԻՏՈՒԹՅՈՒՆՆԵՐԻ ԱԿԱԴԵՄԻԱՅԻ ԸՆԴՀԱՆՈՒՐ ԺՈՂՈՎՆԵՐ

Ապրիլի 13-ին Հայկական ՍՍՀ գիտությունների ակադեմիայի նիստերի դահլիճում տեղի ունեցավ հանրապետության գիտությունների ակադեմիայի տարեկան ընդհանուր ժողովը։

Ժողովը ներածական խոսքով բացեց ակադեմիայի պրեզիդենտ, ակադեմիկոս Վ. Հ. Համբարձումյանը։ Նա նշեց, որ 1978 թ. ակադեմիայի և նրա հիմնարկների գործունեությունն ուղղված է եղել աշխատանքների արդյունավետության և որակի բարձրացմանը։ Ղեկավարվելով ՍՄԿԿ XXV համագումարի որոշումներով՝ գիտական կոլեկտիվները ջանքերը նպատակամղել են ձեռք բերված արդյունքները ժողովրդական տնտեսության մեջ արագորեն ներդնելուն։

Հանրապետության գիտնականների կյանքում կարևոր իրադարձություն եղավ ՍՍՀՄ գիտությունների ակադեմիայի նախագահության որոշումը, որը նվիրված է Հայաստանի գիտությունների ակադեմիայի գիտական հետազոտությունների հիմնական ուղղություններին և զարգացման հեռանկարներին։ Որոշման մեջ բարձր գնահատական է տրված հանրապետության գիտությունների ակադեմիայի գործունեությանը, նշված են նրա գիտակազմակերպական աշխատանքի հետագա կատարելագործման խնդիրները, հանձնարարականներ են մշակված բնական և հասարակական գիտությունների զարգացման հիմնական ուղղությունների վերաբերյալ։

Ակադեմիայի վերջին տարիների գործունեության արդյունքների գնահատականը և հետագա աշխատանքի խնդիրներն է ամփոփում Հայաստանի կոմկուսի կենտկոմի և հանրապետության Մինիստրների խորհրդի որոշումը «Հայկական ՍՍՀ գիտությունների ակադեմիայի գիտական հետազոտությունների հետագա զարգացման և նրա նյութատեխնիկական բազայի ամրապնդման միջոցառումների մասին»։

Խոսելով ակադեմիայի մի շարք ստորաբաժանումների գործունեության մասին, Վ. Հ. Համբարձումյանը նշեց հասարակական գիտությունների գծով արձանագրված ձեռքբերումները։ Նա հատկապես ընդգծեց Ռուսաստանի հետ Արևելյան Հայաստանի միավորման 150-ամյակին նվիրված աշխատությունների և հայ արվեստին նվիրված երկրորդ միջազգային սիմպոզիումի նյութերի արժեքն ու մեծ նշանակությունը։

Հայաստանի ժողովրդական տնտեսության զարգացման հիմնական ուղիներից ելնելով, որոշվել են գիտական որոնման ուղղությունները ռադիոէլեկտրոնիկայի, քիմիայի, էլեկտրոնիկայի և ֆունդամենտալ գիտությունների մյուս ճյուղերում։

Ակադեմիայի պրեզիդենտի ելույթում զգալի տեղ էր հատկացված հանրապետությունում գիտաարտադրական համալիրների ստեղծմանը, որոնք առավել արդյունավետությամբ են լուծում ժողովրդական տնտեսության տարբեր բնագավառների զարգացման հետ կապված խնդիրները։

Միաժամանակ նշվեց, որ դեռևս ակադեմիայի ոչ բոլոր հիմնարկներն են իրենց աշխատանքները վերակառուցում հանրապետության գիտության առջև դրված խնդիրներին համապատասխան։

Հայկական ՍՍՀ գիտությունների ակադեմիայի 1978 թվականի գործունեության հիմնական արդյունքների մասին զեկուցումով հանդես եկավ հանրապետության գիտությունների ակադեմիայի նախագահության գլխավոր գիտնական քարտուղար, ակադեմիայի թղթակից անդամ Գ. Ա. Գալոյանը։ Նա նշեց, որ անցյալ տարի զգալի աշխատանք է կատարվել ժողովրդական տնտեսության մեջ գիտության ու տեխնիկայի նվաճումների արմատավորման ուղղությամբ։ Մշակվել է 482 թեմա ընդգրկող 170 պրոբլեմ։ Գիտական հիմնարկների և արտադրական ձեռնարկությունների կոլեկտիվները հաջողությամբ են իրականացրել ֆիզիկամաթեմատիկական, տեխնիկական, քիմիական, երկրաբանական, կենսաբանական և հասարակական գիտությունների բոլոր հիմնական ճյուղերի գծով պլանավորված աշխատանքները։

Կանգ առնելով ակադեմիայի ստեղծագործական կապերի վրա, զեկուցողը նշեց, որ Հայաստանի գիտնականները համատեղ թեմաներ են մշակել միութենական հանրապետությունների գիտական կազմակերպությունների կոլեկտիվների հետ։ Հաշվետու տարում հաջողությամբ են

զարգացել նաև միջազգային գիտական կապերը։ Երկկողմ համագործակցության ծրագրին համապատասխան, ՀԺՀ-ի, ՉՍՍՀ-ի, ԼԺՀ-ի, ԳԴՀ-ի գիտությունների ակադեմիաների հետ մշակվել են համատեղ թեմաներ, որոնք կարևոր նշանակություն ունեն սոցիալիստական երկրների ժողովրդական տնտեսության զարգացման համար։ Հանրապետության գիտնականները մասնակցել են միջազգային գիտաժողովների, կոնֆերանսների, համագումարների, որտեղ հանդես են եկել զեկուցումներով և գիտական հաղորդումներով։ Հաշվետու տարում Հայաստանում կազմակերպվել են մի շարք միջոցառումներ, որոնց մասնակցել են Եվրոպայի, Ասիայի, Ամերիկայի տարբեր երկրների գիտնականներ։

Հանրապետության գիտությունների ակադեմիայի գործունեության հիմնական արդյունքների վերաբերյալ զեկուցման քննարկմանը մասնակցեցին Հայկական ՍՍՀ գիտությունների ակադեմիայի ակադեմիկոս Ա. Ռ. Նալբանդյանը, Հայկական ՍՍՀ գիտությունների ակադեմիայի թղթակից անդամ Ա. Տ. Ասլանյանը։

«Այրման պրոցեսները անօրգանական նյութերի ստեղծման պրոբլեմում» զեկուցումով հանդես եկավ ֆիզիկամաթեմատիկական գիտությունների դոկտոր, պրոֆեսոր Ա. Գ. Մերժանովը։

Հայկական ՍՍՀ գիտությունների ակադեմիայի փոխպրեզիդենտի պաշտոնակատար ընտրվեց Հանրապետության ԳԱ թղթակից անդամ Վ. Վ. Ցանարջյանը։

Ընդհանուր ժողովում հանձնվեցին Հայկական ՍՍՀ գիտությունների ակադեմիայի ամենամյա ավանդական պարգևները։

Գիտությունների ակադեմիայի բաժանմունքների նիստերում, որոնք նախորդեցին տարեկան ընդհանուր ժողովին, քննարկվեցին բաժանմունքների գիտական հիմնարկների 1978 թ. գործունեության հիմնական արդյունքները, ավելի քան չորս տասնյակ գիտական զեկուցումներ։

Ակադեմիայի տարեկան ընդհանուր ժողովին մասնակցում էին ընկ. ընկ. Կ. Ս. Դեմիրճյանը, Բ. Ե. Սարկիսովը, Ֆ. Տ. Սարգսյանը, Լ. Ն. Ներսիսյանը, կուսակցական, սովետական ղեկավար այլ աշխատողներ։

* * *

Մայիսի 25-ին տեղի ունեցավ Հայաստանի գիտությունների ակադեմիայի ընդհանուր ժողովը՝ նվիրված ՍՄԿԿ Կենտկոմի հուլիսյան (1978 թ.) պլենումի որոշումների կենսագործմանը։

Ժողովը ներածական խոսքով բացեց ՀՍՍՀ ԳԱ պրեզիդենտ Վ. Համբարձումյանը։

— Պլենումը,— ասաց նա,— շեշտելով արտադրության մեջ գիտության նվաճումների արմատավորման անհրաժեշտությունը, ՍՍՀՄ գիտությունների ակադեմիայի, միութենական հանրապետությունների գիտությունների ակադեմիաների, բոլոր գիտնականների առջև խնդիր դրեց առավել արդյունավետ դարձնել գյուղատնտեսության մեջ գիտատեխնիկական առաջընթացի բազմակողմանի պրոբլեմների մշակման գործը։ Այս առումով նշանակալի են մեր հանրապետության գիտության աշխատողների ձեռքբերումները։

Խոսելով գիտատեխնիկական ընդհանուր առաջընթացի ասպարեզում հանրապետության գիտնականների հետագա անելիքների մասին, պրեզիդենտը նշեց, որ առաջիկայում նրանք պետք է լուծեն մի շարք հրատապ խնդիրներ, որոնք կոչված են գարկ տալու մեր հանրապետության սակավահողության պայմաններում գյուղատնտեսական մթերքների առավել առատության հասնելու գործին։

«Հայկական ՍՍՀ գյուղատնտեսության զարգացման ժամանակակից կարևորագույն հարցերը և գյուղատնտեսական գիտությունների խնդիրները» զեկուցումով հանդես եկավ հանրապետության գյուղատնտեսության մինիստր Հ. Թարջումանյանը։

Նշելով, որ հանրապետության գյուղատնտեսության զարգացման ու մթերքների ավելացման գործում ծանրակշիռ ավանդ են ներդնում գիտության աշխատողները, նա բարձր գնահատեց այն օգնությունը, որ վերջիններս ցույց են տալիս գյուղի աշխատավորներին՝ գիտության նվաճումները, նոր տեխնիկան և առաջավոր տեխնոլոգիան արտադրության մեջ ներդնելու գործում։

Հանրապետության գիտությունների ակադեմիայի ակադեմիկոս Վ. Ղաղարյանի զեկուցումը նվիրված էր գյուղատնտեսության հետագա զարգացման բնագավառում ՀՍՍՀ գիտությունների ակադեմիայի գործունեության հարցերին։ Այս ուղղությամբ հատկապես շեշտելով կենսաբանական գիտությունների դերը, նա ասաց, որ կենդանիների, բույսերի և միկրոօրգանիզմների գենետիկայի, սելեկցիայի նոր մեթոդների կիրառումը և ֆիզիոլոգիական էության պարզաբանումը հնարավորություն են ընձեռում գյուղատնտեսության հետագա զարգացման բնագավառում արձանագրել որոշակի նվաճումներ։

Զեկուցողը շեշտեց, որ գիտատեխնիկական առաջընթացի մեծ գործին անհրաժեշտ է ցուցաբերել կոմպլեքսային մոտեցում, հաշվի առնելով շրջակա միջավայրի պահպանության հար-

ցերը, բնական և գյուղատնտեսական ռեսուրսների ընդհանուր բալանսից բխող կարևորագույն խնդիրները։

Զեկուցումների շուրջը ծավալվեց մտքերի փոխանակություն։ Ելույթ ունեցան Հայկական ՍՍՀ գիտությունների ակադեմիայի ակադեմիկոսներ Ա. Իոսիֆյանը, Գ. Դավթյանը, Մ. Մանվելյանը, Ս. Կարապետյանը, Բույսերի պաշտպանության գիտահետազոտական ինստիտուտի բաժնի վարիչ Գ. Ազարյանը։

Հայկական ՍՍՀ գիտությունների ակադեմիայի պրեզիդենտի և առաջին փոխպրեզիդենտի լիազորությունների ժամկետը լրանալու կապակցությամբ Հայկական ՍՍՀ գիտությունների ակադեմիայի կանոնադրության համաձայն անցկացվեցին ընտրություններ։

Ակադեմիայի պրեզիդենտ վերընտրվեց ակադեմիկոս Վիկտոր Համազասպի Համբարձումյանը։ Առաջին փոխպրեզիդենտ վերընտրվեց Էմիլ Հայկի Միրզաբեկյանը։

Գիտությունների ակադեմիայի ընդհանուր ժողովին մասնակցում էին Հայաստանի կոմկուսի Կենտկոմի առաջին քարտուղար Կ. Դեմիրճյանը, Հայկական ՍՍՀ Մինիստրների խորհրդի նախագահ Ֆ. Սարգսյանը, Հայաստանի կոմկուսի Կենտկոմի քարտուղարներ Կ. Դալլաքյանը, Վ. Ղալումյանը։

Ա. ԱԼԵՔՍԱՆՅԱՆ

III ВСЕСОЮЗНАЯ КОНФЕРЕНЦИЯ «ИСКУССТВО И АРХЕОЛОГИЯ ИРАНА И ЕГО СВЯЗЬ С ИСКУССТВОМ НАРОДОВ СССР С ДРЕВНЕЙШИХ ВРЕМЕН»

Государственный Музей искусства народов Востока (Москва) — один из наиболее известных центров советского востоковедения. Уже на протяжении нескольких десятилетий, наряду с организацией многочисленных тематических выставок и экспедиций по республикам СССР, Музей издает научные труды по культуре и искусству Востока. Ценным вкладом Музея в развитие отечественного искусствознания является проведение ряда всесоюзных конференций. В связи с этим знаменателен созыв Музеем очередной, III Всесоюзной конференции «Искусство и археология Ирана и его связь с искусством народов СССР с древнейших времен» (Москва, 12—15 февраля 1979 г.). Первая и вторая конференции по Ирану были проведены Музеем в 1969 и 1973 гг.

На конференции было представлено 42 доклада; охват проблем весьма широк — археология, зодчество, монументальное и декоративно-прикладное искусство, живопись, миниатюра как Ирана, так и сопредельных стран Востока. Целый ряд докладов либо прямо затрагивал проблемы искусства Армении, либо же касался вопросов, представляющих значительный интерес и при анализе наследия армянской культуры. В сообщении А. М. Акопяна (Москва) «Дворцово-храмовая архитектура Закавказья (Иберия, Армения, Кавказская Албания) и ее иранские параллели» отмечены связи между архитектурной культурой закавказского региона и Ирана, наблюдаемые уже с VI в. до н. э. М. М. Асратян (Ереван) в работе «Иранские элементы в армянской архитектуре позднего средневековья» указал на существование факторов, которые привели (в Восточной Армении) к появлению «не только присущих иранскому искусству декоративных элементов, но и характерных для иранского зодчества форм архитектурных конструкций».

В докладе Р. Н. Амирбекян (Ереван) «Миниатюра персидских рукописей и документов каджарского периода из собрания Матенадарана», сопровождавшемся показом большого количества слайдов, были представлены некоторые наиболее типичные миниатюры, группы рукописей и документов из арабо-персидского фонда Матенадарана. Сообщение Л. С. Бретаницкого (Баку) «Проблемы типологизации архитектурного наследия Переднего Востока» непосредственно перекликается с вопросами изучения зодчества Армении. В докладе В. Б. Блэк (Ленинград) «Некоторые специфические черты стиля пластики Ирана II—I тыс. до н. э. (к проблеме реализма пластики Переднего Востока») проанализирован как параллелизм, так и яркое своеобразие произведений древней пластики Востока. А. М. Высоцкий (Москва) — «Региональные особенности раннесредневековой христианской архитектуры негреческого Востока и передневосточный архитектурный кодекс» — рассмотрел проблемный вопрос распростра-